

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒԼԻՍ

ՔԻՄԻԱ

ԹԵՄԱ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1

Ո՞ր պնդումը ճիշտ չէ քիմիական տարրերի վերաբերյալ.

- 1) մետաղական տարրերի թիվը մեծ է ոչմետաղական տարրերի թվից
- 2) ոչմետաղական տարրը ազատ վիճակում առաջացնում է ոչմետաղ պարզ նյութ
- 3) նույն տարրի առաջացրած պարզ նյութերը՝ ալոտրոպներն ունեն նույն հալման ջերմաստիճանը
- 4) քիմիական տարրերի թիվը փոքր է պարզ նյութերի թվից

2

Հետևյալներից ո՞րն է ֆիզիկական երևույթի հետևանք.

- 1) չոր սառույցի վերածվելը գազի
- 2) գրաֆիտի վերածումը ալմաստի
- 3) կրաքարի զանգվածի նվազումն այն տաքացնելիս
- 4) անջուր աղից և ջրից բյուրեղահիդրատի գոյացումը

3

Ո՞ր շարք են ներառված միայն d-տարրեր.

- 1) Ba, Mn, Au
- 2) Ru, Os, Ag
- 3) Cu, Zn, Te
- 4) Mg, Sc, Hg

4

Ո՞ր իզոտոպն է առաջանում ${}_{92}^{238}\text{U}$ -ի միջուկը երկուական β - և α - տրոհման ենթարկվելիս.

- 1) ${}_{90}^{236}\text{Th}$
- 2) ${}_{88}^{230}\text{Ra}$
- 3) ${}_{88}^{230}\text{U}$
- 4) ${}_{90}^{230}\text{Th}$

5

Ո՞րն է Se^{2-} իոնի արտաքին էներգիական մակարդակի էլեկտրոնային բանաձևը.

- 1) $2s^2 2p^5$
- 2) $3s^2 3p^4$
- 3) $4s^2 4p^6$
- 4) $3s^2 3p^2$

6

Ի՞նչ կապերով են կապված ածխածնի ատոմներն ալմաստում.

- 1) համարժեք պի կապերով
- 2) էներգիայով և երկարությամբ իրարից տարբերվող սիգմա կապերով
- 3) սիգմա և պի կապերով
- 4) համարժեք սիգմա կապերով

7

Ո՞ր շարքում են հետևյալ միացությունների համարները դասավորված ըստ դրանց մոլեկուլներում քիմիական կապի բնեռայնության աճի.

1. սիլիցիումի (IV) օքսիդ, 2. ածխածնի (II) օքսիդ, 3. ազոտի (II) օքսիդ
4. ջուր

- 1) 4, 3, 2, 1
- 2) 4, 1, 2, 3
- 3) 3, 2, 4, 1
- 4) 3, 1, 2, 4

8

Բերվածներից ո՞րը պետք է ավելացնել կալցիումի կարբոնատի նոր ստացված սուսպենզիան թափանցիկ լուծույթի վերածելու համար.

- 1) ածխածնի (IV) օքսիդ
- 2) ազոտի (II) օքսիդ
- 3) ամոնիակ
- 4) ածխածնի (II) օքսիդ

9

Հետևյալ նյութերի մոլեկուլներից որոնցո՞ւմ է ազոտի օքսիդացման աստիճանը «-3».

ա) NO_2 , բ) HCN գ) N_2H_4 , դ) HNO_2 , ե) NH_4Cl

- 1) բ, ե
- 2) բ, գ, ե
- 3) բ, գ
- 4) ա, բ, ե

10

Ո՞ր գործոնից կախված չէ գազի լուծելիության գործակիցը.

- 1) լուծիչի բնույթից
- 2) ճնշումից
- 3) լուծիչի ծավալից
- 4) ջերմաստիճանից

11

Ո՞ր շարք ներառված բոլոր աղերի ջրային լուծույթներում է լակմուսը ներկվում կապույտ գույնով.

- 1) CuSO_4 , MgCl_2 , Na_2CO_3
- 2) HCOONa , ZnSO_4 , $\text{Fe}(\text{NO}_3)_2$
- 3) Na_2SO_3 , Na_2CO_3 , HCOONa
- 4) Na_2SO_3 , ZnSO_4 , NH_4NO_3

12

Բերված գործոններից որո՞նք կարող են արտադրության մեջ իրականացվող $\text{N}_{2(g)} + 3\text{H}_{2(g)} \rightleftharpoons 2\text{NH}_{3(g)} + Q$ ռեակցիայի հավասարակշռությունը տեղաշարժել դեպի աջ. ա) ջերմաստիճանի բարձրացում, բ) ջերմաստիճանի իջեցում, գ) ճնշման մեծացում, դ) ճնշման փոքրացում.

- 1) ա, գ
- 2) բ, գ
- 3) ա, դ
- 4) բ, դ

13

Ո՞ր նյութի լուծույթով պետք է անցկացնել օզոնի խառնուկ պարունակող թթվածինը օզոնից ազատվելու համար.

- 1) կալիումի սուլֆատ
- 2) կալիումի յոդիդ
- 3) կալիումի քլորիդ
- 4) կալիումի հիդրօքսիդ

14

Ո՞ր շարք ներառված բոլոր միացությունները կարող են առաջացնել ջրածնային կապեր սենյակային ջերմաստիճանում.

- 1) մեթան, ջուր, ֆտորաջրածնական թթու
- 2) էթանոլ, մեթիլամին, քացախաթթու
- 3) ածխաթթու, ամոնիակ, բենզոլ
- 4) էթանալ, բենզոլ, սիլան

15


Որո՞նք են օքսիդացման գործընթացներ.

- | | | |
|--|---|---|
| ա) $\text{H}^0 \rightarrow \text{H}^+$ | գ) $\text{NO}_2^- \rightarrow \text{NO}_2$ | ե) $\text{SO}_2 \rightarrow \text{SO}_4^{2-}$ |
| բ) $\text{H}^0 \rightarrow \text{H}^-$ | դ) $\text{Cu}^{2+} \rightarrow \text{Cu}^0$ | զ) $\text{ClO}^- \rightarrow \text{Cl}^0$ |

- 1) ա, գ, ե
- 2) ա, գ, զ
- 3) գ, դ, ե
- 4) բ, դ, զ

16

Ո՞ր արտահայտությունն է ճիշտ $U + P \rightarrow Q$ ուրվագրով ընթացող ռեակցիայի վերաբերյալ ըստ պատկերված գծանկարի.



- 1) ռեակցիան ջերմանջատիչ է
- 2) ռեակցիան ջերմակլանիչ է
- 3) գծանկարի վրա պատկերված է հավասարակշռային պահը
- 4) ռեակցիայի ընթացքում ջերմային երևույթներ չեն նկատվում

17

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) հիբրիդացման հետևանքով նույնացվում է sp^2 օրբիտալի տեսքը, և՛ ձևը
- 2) հիբրիդացումն ապահովում է օրբիտալների նվազագույն փոխաձայնություն
- 3) sp^2 հիբրիդացմանը բնորոշ է 120° անկյունը և հարթ կառուցվածքը
- 4) sp^3 հիբրիդային օրբիտալն ունի անհամաչափ մարգահանտելի տեսք

18

Ո՞ր աղի ջրային լուծույթի էլեկտրոլիզի դեպքում է ջուրը ենթարկվում և՛ անոդային օքսիդացման, և՛ կաթոդային վերականգնման.

- 1) NaBr
- 2) AgNO₃
- 3) CuCl₂
- 4) Na₂SO₄

19

Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ճիշտ K^+ , Na^+ , SO_4^{2-} իոնների հայտաբերման վերաբերյալ:

1. K^+ իոնները կրակի բոցը ներկում են մանուշակագույն:
2. Na^+ իոնները կրակի բոցը ներկում են կարմիր:
3. SO_4^{2-} իոնները հայտաբերում են բարիումի լուծելի աղերի միջոցով:

- 1) միայն 2
- 2) 2, 3
- 3) 1, 3
- 4) 1, 2

20

Ցինկի, երկաթի և ալյումինի փոշիների խառնուրդը բաժանել են երկու հավասար մասի: Մի մասի և աղաթթվի փոխազդեցությունից անջատվել է a լ գազ, իսկ մյուս կեսի և նատրիումի հիդրօքսիդի նոսր լուծույթի փոխազդեցությունից՝ b լ գազ: Ո՞րն է a և b ծավալների փոխհարաբերությունը.

- 1) $a > b$
- 2) $a < b$
- 3) $2a = b$
- 4) $a = b$

21

Ո՞ր շարք են ներառված իոնային բյուրեղականդակ առաջացնող նյութերի բանաձևեր.

- 1) NH_4Cl , KF , AlCl_3
- 2) H_2O , NH_3 , NH_4NO_3
- 3) ZnSO_4 , CCl_4 , CH_3COONa
- 4) N_2 , C , Cu

22

Ո՞ր շարք են ներառված ջրային լուծույթում նատրիումի սուլֆիտի հիդրոլիզի առաջին փուլի արգասիքների դասերը.

- 1) թթու և հիմնային աղ
- 2) թթու աղ և հիմնային աղ
- 3) թթու աղ և հիմք
- 4) թթու և հիմք

23

Հետևյալ նյութերից որի՞ ավելացումով կմեծանա քացախաթթվի դիսոցման աստիճանը ջրային լուծույթում.

- 1) H_2O
- 2) CH_3COONa
- 3) C_6H_6
- 4) HCl

24

Մանգանի (IV) օքսիդը ո՞ր ռեակցիաներում է հանդես գալիս որպես փոխազդող նյութ և ոչ թե կատալիզատոր. ա) աղաթթվից քլորի ստացում, բ) կալիումի քլորատից թթվածնի ստացում, գ) բրոմաջրածնական թթվից բրոմի ստացում, դ) ջրածնի պերօքսիդից թթվածնի ստացում.

- 1) ա, դ
- 2) բ, գ
- 3) գ, դ
- 4) ա, գ

25

Ջուր պարունակող անոթ են մղել հավասար ծավալներից կազմված թթվածնի և քլորաջրածնի խառնուրդ: Որոշ ժամանակ անց ջրի մեջ լուծված թթվածնի (a մլ) և քլորաջրածնի (b մլ) ծավալները ինչպե՞ս են փոխհարաբերում.

- 1) $a = b$
- 2) $a < b$
- 3) $a = 2b$
- 4) $a > b$


26

Ո՞ր շարք ներառված նյութերից յուրաքանչյուրի հետ կփոխազդի ջրածինը համապատասխան պայմաններում.

- 1) NaOH, S, CO
- 2) O₂, N₂, NaCl
- 3) S, Ar, Na
- 4) N₂, S, CO

27

Ըստ փոխարկումների բերված շղթայի.



ո՞ր շարք են ներառված ավելացվող ազդանյութերի բանաձևերը և ռեակցիաների պայմանները համապատասխան հերթականությամբ.

- 1) H₂(hν), KMnO₄, NaCl, t⁰ և կատ., H₂
- 2) H₂(hν), KMnO₄, KOH(լուծ. 100 °C), t⁰ և կատ., H₂
- 3) H₂O, MnO₂, KOH(լուծ. 20 °C), NaNO₃, H₂
- 4) H₂(hν), CH₄, KOH, t⁰, H₂

28

Հետևյալ նիտրատներից որո՞նք են ենթարկվում ջերմային քայքայման՝ անջատելով նաև թթվածին. 1. NaNO₃, 2. Pb(NO₃)₂, 3. NH₄NO₃, 4. Cu(NO₃)₂

- 1) 1, 2, 4
- 2) 1, 3
- 3) 3, 4
- 4) 1, 2, 3

29

Ո՞ր գույգ ներառված նյութերը կվերացնեն ջրի ընդհանուր կոշտությունը.

- 1) K₃PO₄, NaOH
- 2) NaNO₃, Ca(OH)₂
- 3) Na₃PO₄, NaOH
- 4) Na₃PO₄, Na₂CO₃

30

Ո՞ր շարք ներառված նյութերն են օգտագործում որպես վերականգնիչներ մետաղների արտադրությունում.

- 1) Zn, H₂, NO₂, NH₃
- 2) Mg, C, CO₂, H₂
- 3) Cu, CH₄, CO, H₂S
- 4) Al, C, CO, H₂

31

Համապատասխանեցնել ռեակցիայի ուրվագիրը, տեսակը և օրգանական վերջանյութի մոլեկուլում սիգմա կապերի թիվը.

ռեակցիայի ուրվագիր	ռեակցիայի տեսակ	սիգմա կապերի թիվը
ա) $C_3H_6 + H_2O \xrightarrow{H^+} \dots\dots$	1) վերախմբավորման	Ա) 3
բ) $C_6H_{14} \xrightarrow{AlCl_3, t^\circ} \dots\dots$	2) տեղակալման	Բ) 6
գ) $CH_3OH + CuO \xrightarrow{t^\circ} \dots\dots$	3) միացման	Գ) 19
դ) $C_3H_7Cl \xrightarrow[սպիրտային]{KOH, t^\circ} \dots\dots$	4) պոկման	Դ) 12
	5) օքսիդացման	Ե) 8
	6) պոլիկոնդեսման	Չ) 9
		Է) 11

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3Է, բ1Գ, գ5Բ, դ4Ե
- 2) ա2Է, բ1Գ, գ3Ա, դ4Ե
- 3) ա3Դ, բ6Զ, գ5Ա, դ2Ե
- 4) ա3Է, բ1Գ, գ5Ա, դ4Ե

32

Բենզոլի հոմոլոգի մոլեկուլը կազմված է 18 ատոմից: Դրա նիտրացումից գոյանում է միայն մեկ մոնոնիտրոածանցյալ: Ո՞րն է այդ հոմոլոգը:

- 1) տոլուոլ
- 2) 1,3-երկմեթիլբենզոլ
- 3) 1,4-երկմեթիլբենզոլ
- 4) էթիլբենզոլ

33

Ո՞ր շարք ներառված նյութերը համապատասխան պայմաններում կփոխազդեն թարմ ստացված պղնձի (II) հիդրօքսիդի հետ.

- 1) CH₃CHO, HCHO, HCOOH, C₃H₅(OH)₃
- 2) HCOOH, CH₃OH, C₂H₅OH
- 3) HCHO, C₂H₅OH, CH₃NH₃, CH₃CHO
- 4) CH₃OH, C₃H₅(OH)₃, HCHO

34

C_8H_{16} բանաձևով ալկենին բրոմաջրածին միացնելիս առաջանում է 3-բրոմ-2,5-երկմերիլհեքսան: Նույն ալկենի հիդրումից ստացվում է ալկան: Ո՞ր միացությունից Վյուրցի ռեակցիայով կարելի է ստանալ այդ ալկանը.

- 1) 2-բրոմբութան
- 2) 2-բրոմ-2-մերիլպրոպան
- 3) 1-բրոմ-2-մերիլպրոպան
- 4) 1-բրոմբութան

35

Ո՞ր շարք են ներառված 1-պրոպանոլից ագետոնի ստացման գործընթացները համապատասխանաբար.

- 1) ջրի պոկում, ջրի միացում, օքսիդացում
- 2) օքսիդացում, վերականգնում, ջրի պոկում
- 3) ջրի պոկում, ջրի միացում, վերականգնում
- 4) ջրի պոկում, օքսիդացում, վերականգնում

36

Ո՞ր միացությունները կգունազրկեն բրոմաջուրը. ա) բենզոլ, բ) անիլին, գ) էթեն, դ) գլիցերին, ե) ֆենոլ.

- 1) ա, բ, գ
- 2) գ, դ, ե
- 3) բ, գ, դ
- 4) բ, գ, ե

37

Որո՞նք են բաց թողած բառերը.

Կատալիտիկ կրեկինգը իրականացնում են բնական կամ սինթետիկ..... առկայությամբ, ինչը հնարավորություն է ստեղծում գործընթացը տանելու ավելի ջերմաստիճանում:

- 1) ալյումասիլիկատների, ցածր
- 2) կարբոնատների, ցածր
- 3) կարբոնատների, բարձր
- 4) ալյումասիլիկատների, բարձր

38

$C_4H_8O_2$ բանաձևն ունեցող էսթերը փոխազդում է արծաթի (I) օքսիդի ամոնիակային լուծույթի հետ: Ո՞ր շարքում են բերված այդ պայմանին բավարարող էսթերների անվանումները.

- 1) պրոպիլֆորմիատ, էթիլֆորմիատ
- 2) իզոպրոպիլֆորմիատ, մերիլֆորմիատ
- 3) էթիլացետատ, մերիլպրոպիոնատ
- 4) պրոպիլֆորմիատ, իզոպրոպիլֆորմիատ

39

Ո՞ր նյութերի միջև է հնարավոր փոխազդեցություն համապատասխան պայմաններում.

- ա) էթիլամինի և արծաթի (I) օքսիդի ամոնիակային լուծույթի
- բ) անիլինի և բրոմի
- գ) մեթիլամինի և կալիումի հիդրօքսիդ
- դ) էթիլամինի և քլորաջրածնի
- ե) անիլինի և ծծմբական թթվի

- 1) բ, գ, դ
- 2) բ, դ, ե
- 3) ա, բ, գ
- 4) ա, գ, ե

40

Միայն մեկ α -ամինաթթվի մնացորդներից կազմված եռպեպտիդի մոլեկուլային բանաձևը՝ $C_9H_{17}N_3O_4$ է: Ո՞րն է այդ ամինաթթուն և որքա՞ն է եռպեպտիդի մոլեկուլում sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը.

- 1) սերին, 9
- 2) ալանին, 6
- 3) վալին, 9
- 4) գլիցին, 6

41

$10^\circ C$ ջերմաստիճանում ռեակցիայի արագությունը հավասար է $0,5$ մոլ/լ·րոպե: Որքա՞ն է ռեակցիայի արագությունը (մոլ/լ·րոպե) $50^\circ C$ ջերմաստիճանում, եթե ռեակցիայի արագության ջերմաստիճանային գործակիցը $\gamma=2$ է:

42

Ծծումբ պարունակող գազային միացության խտությունը 27°C -ում և $74,7$ կՊա ճնշման պայմաններում $1,02$ գ/լ է: Որքա՞ն է միացության հարաբերական խտությունն ըստ ջրածնի ($R = 8,3$ Ջ/մոլ $\cdot$ Կ, $T = 273$ Կ):

43

Ի՞նչ միջին մոլային զանգվածով (գ/մոլ) գազային խառնուրդ կստացվի քացախաթթվի և կարազաթթվի նատրիումական աղերի $1 : 3$ մոլային հարաբերությամբ խառնուրդն ավելցուկով չոր նատրիումի հիդրօքսիդի հետ շիկացնելիս:

44

25 % զանգվածային բաժնով պղնձի (II) սուլֆատի 400 մլ լուծույթը ($\rho = 1,2 \text{ գ/սմ}^3$) սառեցնելիս բյուրեղացել է 50 գ պղնձարջասպ՝ $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$: Նստվածքի ֆիլտրումից հետո մնացած լուծույթով անց են կացրել 11,2 լ (ն. պ.) ծծմբաջրածին: Որքա՞ն է լուծույթում մնացած պղնձի սուլֆատի զանգվածը (գ):

45

Պարզ նյութերից մեթանի ստացումը դարձելի պրոցես է. $\text{C} + 2\text{H}_2 \rightleftharpoons \text{CH}_4$: Վերցրած ջրածնի քանի՞ տոկոսն է (ըստ ծավալի) փոխարկվել մեթանի, եթե հավասարակշռության վիճակում գտնվող գազային խառնուրդի ծավալի 60 % -ը մեթան է:

(46 - 47) Քլորաջրածնի 25 % զանգվածային բաժնով 584 գ լուծույթի և 194 գ ցինկի սուլֆիդի փոխազդեցությունից անջատված գազը լրիվ այրել են ավելցուկով վերցրած թթվածնում: Ստացված ծծմբի (IV) օքսիդն անցկացրել են կալիումի հիդրօքսիդի 25 % զանգվածային բաժնով 672 գ լուծույթի մեջ:

46

Որքա՞ն է թթու աղի զանգվածային բաժինը (%) վերջնական լուծույթում:

47

Որքա՞ն է չեզոք աղի զանգվածը (գ) վերջնական լուծույթում:

(48 - 49) Նատրիումի քլորիդի, նիտրատի և սուլֆատի 40,25 գ խառնուրդը լուծել են 221,95 գ ջրում: Ստացված լուծույթին 31,2 գ քարիումի քլորիդ ավելացնելիս նստել է 23,3 գ նստվածք, որը հեռացնելուց հետո ֆիլտրատից քլորիդ իոնը լրիվ նստեցնելու համար պահանջվել է 40,8 % զանգվածային բաժնով արծաթի նիտրատի 250 գ լուծույթ:

48

Որքա՞ն է նիտրատ իոնի զանգվածային բաժինը (%) քլորիդ իոնը հեռացնելուց հետո մնացած լուծույթում:

49

Որքա՞ն է նատրիումի նիտրատի զանգվածը (մգ) ելային խառնուրդում:

(50 - 51) Ծծմբի (VI) օքսիդի 30 % զանգվածային բաժնով 646 գ օլեոմին ավելացրել են 64 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթ ($\rho = 1,52$ գ/սմ³) և ստացել 10 % զանգվածային բաժնով ծծմբի (VI) օքսիդ պարունակող օլեոմ:

50

Որքան է ավելացրած 64 % զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթի ծավալը(մլ):

51

Ի՞նչ զանգվածով (գ) նատրիումի հիդրօքսիդ կպահանջվի 30 % զանգվածային բաժնով ծծմբի (VI) օքսիդ պարունակող 210 գ օլեոմի լրիվ չեզոքացման համար:

(52 - 53) *Բուծանի, բուծենի և ջրածնի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի 12 է: Այդ խառնուրդը կալիումի պերմանգանատի լուծույթով անցկացնելուց հետո մնացել է նոր խառնուրդ, որի խտությունը ըստ ջրածնի 8 է:*

52 Որքա՞ն է ջրածնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

53 Որքա՞ն է ծանր բաղադրիչի ծավալային բաժինը (%) վերջնական խառնուրդում:

(54 - 55) Պայթեցրել են 10 մլ գազային ածխաջրածնի և 70 մլ թթվածնի խառնուրդը: Ջրային գոլորշիների կոնդենսացումից հետո մնացած 65 մլ գազային խառնուրդը կալիումի հիդրօքսիդի լուծույթով անցկացնելիս գազային խառնուրդի ծավալը դարձել է 45 մլ :

54

Քանի՞ ատոմ ջրածին է բաժին ընկնում ածխածնի մեկ ատոմին ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

55

Ի՞նչ զանգվածով (գ) նստվածք կգոյանա այդ ածխաջրածնի մեկ մոլը կալիումի պերմանգանատի նոսր ջրային լուծույթով օքսիդացնելիս:

(56 - 58) Թթվածնի և ազոտի(II) օքսիդի խառնուրդում թթվածնի ատոմների թիվը երեք անգամ մեծ է ազոտի ատոմների թվից : Ստացված գազային խառնուրդը անցկացրել են 40 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 1200 գ լուծույթի մեջ: Արդյունքում գոյացել է 637,5 գ աղ: Այնուհետև ավելացրել են 195 գ ջուր:

56

Որքա՞ն է բոլոր ռեակցիաներում ելային թթվածնի փոխարկման աստիճանը (%):



57

Որքա՞ն է վերջնական լուծույթում ալկալու զանգվածային բաժինը (%):

58

Որքա՞ն է ազոտի (II) օքսիդի ծավալը սկզբնական խառնուրդում (լ.,ն.պ.):

(59 - 61) Նորմալ բութանի 87 գ նմուշը կրեկինգի ենթարկելիս կլանվել է 1,65Q կՋ ջերմություն, իսկ կրեկինգն ընթացել է երկու ուղղությամբ՝ ըստ հետևյալ ջերմաքիմիական հավասարումների.



Ստացված գազային խառնուրդն անցկացրել են անհրաժեշտ քանակով բրոմի 15 % զանգվածային բաժնով բրոմաջրի միջով:

59

Բութանի n° ր մասն է (%) քայքայվել մեթանի և պրոպենի առաջացմամբ:

60

Որքա՞ն է ծախսված բրոմաջրի զանգվածը (գ):

61

Որքա՞ն է ստացված փոքր մոլային զանգվածով բրոմածանցյալի զանգվածը (գ):

(62 - 64) Համապատասխան պայմաններում 1 լ ծավալով փակ անոթում գտնվող մեկական մոլ/լ քլորաջրածինը և թթվածինը փոխազդել են և ստեղծվել է $4\text{HCl}_{(g)} + \text{O}_{2(g)} \rightleftharpoons 2\text{Cl}_{2(g)} + 2\text{H}_2\text{O}_{(g)}$ հավասարակշռությունը: Հավասարակշռային խառնուրդում քլորաջրածնի կոնցենտրացիան 0,2 մոլ/լ է:

62

Որքա՞ն է քլորի հավասարակշռային կոնցենտրացիան (մոլ/լ):

63

Որքա՞ն է թթվածնի հավասարակշռային կոնցենտրացիան (մոլ/լ):

64

Որքա՞ն է հավասարակշռության հաստատունի թվային արժեքը:

(65 - 67) Մագնեզիումի և պղնձի (II) քլորիդների հավասարամոլային խառնուրդը լուծել են 394 մլ ջրում և ավելացրել արծաթի նիտրատի 1 մոլ/լ կոնցենտրացիայով որոշակի ծավալով լուծույթ ($\rho = 1,1$ գ/մլ): Առաջացած 114,8 գ նստվածքը հեռացրել են և լուծույթի մեջ ընկղմել պղնձե թիթեղ: Ռեակցիան ավարտվելուց հետո թիթեղի զանգվածը ավելացել է 15,2 գրամով:

65

Որքա՞ն է քլորիդների ելային խառնուրդի զանգվածը (գ):

66

Որքա՞ն է պղնձե թիթեղը հանելուց հետո մնացած լուծույթի զանգվածը (գ):

67

Որքա՞ն է վերջնական լուծույթում պղնձի(II) նիտրատի զանգվածային բաժինը (%):

ելանյութեր	վերջանյութեր
ա) $C_6H_{12}O_6 \xrightarrow{Ag[(NH_3)_2]^+, t}$	1) $CH_3CH_2CH_2COOH + Cu_2O + 2H_2O$
բ) $CH \equiv CCH_2CH_3 + H_2O \xrightarrow{t^\circ}$	2) $C_4H_9COONa + CH_3OH$
գ) $C_4H_9COOCH_3 + H_2O \xrightarrow{+NaOH, t}$	3) $C_4H_9COOH + CH_3ONa$
դ) $CH_3CH_2CH_2CH=O + 2Cu(OH)_2 \rightarrow$	4) $CH_3CH_2CHOCH_3$
	5) $C_6H_{14}O_6$ (սորբիտ)
	6) $C_6H_{12}O_7$ (գլյուկոնաթթու)
	7) $CH_3CH_2COOH + 2CuO + H_2O$

Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը քիմիական նյութերի և դրանց բաղադրություններում առկա տարրերի ատոմների հատկությունների վերաբերյալ.

- Ֆենոլի մոլեկուլում ($-OH$) խմբի ազդեցությամբ էլեկտրոնային խտությունը բենզոլային օղակի 2,4,6 դիրքերում փոքրանում է:
- Մեթիլ- և էթիլսպիրտների խառնուրդը խիտ ծծմբական թթվի հետ տաքացնելիս ($t < 140^\circ C$) հիմնականում առաջանում են՝ երկէթիլ-, երկմեթիլ-, մեթիլէթիլէթերի խառնուրդ:
- Մետաղը կերամաշումից պաշտպանելու նպատակով այդ մետաղի հպումն առավել ակտիվ մետաղի հետ կոչվում պրոտեկտորային պաշտպանություն:
- H_2O , $BeCl_2$ և NH_3 մոլեկուլներից գծային կառուցվածք ունի միայն $BeCl_2$ -ը և թթվածնի, բերիլիումի և ազոտի ատոմները համապատասխանաբար գտնվում են sp^3 , sp , sp^3 հիբրիդային վիճակներում:
- Ե՛վ երկաթը, և՛ ալյումինը սենյակային ջերմաստիճանում հեշտությամբ փոխազդում են խիտ ազոտական և ծծմբական թթուների հետ:
- Օսլայի մասնակի հիդրոլիզից առաջանում է մալթոզ դիսախարիդը (երկշաքար), իսկ լրիվ հիդրոլիզի արդյունքում՝ α -գլյուկոզ:

Արծաթի(I) և պղնձի (II) նիտրատների խառնուրդը ենթարկել են ջերմային քայքայման: Առաջացել է 1,64 գ պինդ մնացորդ և անջատվել է զազային խառնուրդ, որը ջրի միջով բաց թողնելիս՝ 0,64 գ զազ չի կլանվել: Նույն զանգվածով նիտրատների խառնուրդը լուծել են 136,8 գ ջրում և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի իներտ էլեկտրոդներով: Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Վերջնական լուծույթի զանգվածը կազմել է 130 գ:
- 2) Նիտրատների խառնուրդը ջերմային քայքայման ենթարկելիս անջատվել է 20 գ զազային խառնուրդ:
- 3) Ելային խառնուրդի էլեկտրոլիզի արդյունքում կաթոդի վրա անջատվել է 11,84 գ մետաղների խառնուրդ:
- 4) էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում պարունակվում է 11,34 գ նյութ:
- 5) Նյութի զանգվածային բաժինը էլեկտրոլիզից հետո մնացած լուծույթում, եթե անոդի վրա անջատվել է 13,776 Լ (ն.պ.) զազ 9 % է:
- 6) Ելային խառնուրդում պարունակվել է 0,08 մոլ արծաթի նիտրատ: